ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի հունիսի 21-22-ը ք.Լոնդոն (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. ***Անունը, ազգանունը***
   Արման Ուդումյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***
   Լոնդոն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, հունիսի 21-22, 2018 թ.

4. ***Հրավիրող կողմը***
   Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ), գլխամասային գրասենյակ մասնակցել են «Զարգացող Եվրոպա» միջոցառումների շարքին

5. ***Գործուղման նպատակը***
   Մասնակցություն ՎԶԵԲ «Զարգացող Եվրոպա» գիտահետազոտական կենտրոնի կողմից անցկացվող սեմինար քննարկումներին և մի շարք անվանակարգերում, Կենտրոնի կողմից անցկացված հետազոտության արդյունքում, սոցիալական առաջընթացին և տնտեսական զարգացմանը նպաստող հասարակական, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու բիզնեսների շրջանում անցկացված մրցանակաբաշխության արդյունքերին: Մրցանակաբաշխությունը նպատակ ուներ լուսաբանելու հաջողված պատմությունները, առաջատար նախագծերը և լավագույն փորձը՝ խրախուսելով մտքի առաջնորդությունը և գերազանցությունը մասնակից 23 երկրներում:

6. ***Քննարկված թեմաները (սեմինար քննարկումները)***

   - Սոցիալական նորարարություններ և ձեռնարկատիրություն
   - Նպատակային ներդրումներ

   Միջոցառմանը մասնակցող տարածաշրջանային երկրների մեծ մասը (Կենտրոնական Եվրոպա և Բալթյան երկրներ; Հարավ-արևելյան Եվրոպա; Արևելյան Եվրոպա և Կովկաս) բավականին առաջընթաց են գրանցել սոցիալական ձեռնարկատիրության ասպարեզում, ինչպես նաև ունեն տաղանդավոր և ստեղծագործ աշխատուժ, որը, ի տարբերություն զարգացած

արևմտաեվրոպական երկրների, դեռևս ամբողջովին զբաղված չէ: Աշխատուժի այս առկայությունն էլ ավելի գրավիչ է դարձնում նշված երկրներին (ի տարբերություն զարգացած արևմտաեվրոպական երկրների) տարբեր սոցիալական նորարարությունների և ոլորտային ներդրումների համար: Ելնելով վերոնշյալից, տարածաշրջանային երկրները պետք է ավելի մեծ կարևորություն տան այնպիսի օտարերկրյա ներդրումներին, որոնց արդյունքում ստեղծվում են աշխատատեղեր:

Մասնակից երկրներ (տարածաշրջաններ)

Կենտրոնական Եվրոպա և Բալթյան երկրներ; Հարավ-արևելյան Եվրոպա; Արևելյան Եվրոպա և Կովկաս

1. Էստոնիա
2. Լատվիա
3. Լիտվա
4. Լեհաստան
5. Չեխիա
6. Սլովակիա
7. Հունգարիա
8. Ռումինիա
9. Բուլղարիա
10. Սլովենիա
11. Խորվաթիա
12. Ալբանիա
13. Մոնտենեգրո
14. Սերբիա
15. Մակեդոնիա
16. Կոսովո
17. Բուլղարիա
18. Հայաստան
19. Ուկրաինա
20. Ադրբեջան
21. Բելառուս
22. Վրաստան
23. Մոլդովա

7. ***<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>***

- Գյունտեր Վերհոգենը, Եվրահանձնաժողովի Ընդլայնման հարցերով նախկին գլխավոր տնօրենը (1999-2004) խոսեց կայուն սոցիալ-տնտեսական զարգացման դերի մասին զարգացող և զարգացած Եվրոպայի մերձեցման գործընթացում

- Հելենա Շվեյգերը ՎՀԵԲ ավագ տնտեսագետը խոսեց տարածաշրջանային երկրներում սոցիալական նորարարությունների և տնտեսական աճի տեմպերի պահպանման քաղաքականության մասին
- Էնդրյու Ռոբելը, «Զարգացող Եվրոպա» կենտրոնի հիմնադիրներից մեկը խոսեց կենտրոնի կողմից տարածաշրջանի տարբեր կազմակերպությունների շրջանում անցկացված հետազոտության մեթոդաբանության և հաղթող կազմակերպությունների ծրագրերի մասին, որոնք խթանում են նորարարությունները սոցիալական, կրթական և այլ բնագավառբերում: Նա նաև ներկայացրեց մասնակից 23 երկրների ներդրումների խթանման գործակալությունների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները:

Հանդիպումները նպատակ ունեին նպաստելու Կենտրոնական և Արևելյան եվրոպայի և Կովկասյան քսաներեք երկրների սոցիալական և տնտեսական զարգացմանը և տարածաշրջանի մասին իրազեկվածության բարձրացմանը:

Այն հնարավորություն էր տալիս նաև ներկայացված երկրների պատվիրակություններին գտնել գործընկերներ, ներկայացնել առկա հնարավորությունները և քննարկել ծրագրային գաղափարներ:

8. *Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը*

Միջոցառման ավարտին որոշվել է, որ 2 շաբաթվա ընթացքում կկազմվի և կտարածվի մասնակից կազմակերպությունների կողմից միջոցառման ընթացքում վեր հանված առաջարկները և ոլորտային տարբեր ծրագրերում վերջիններիս մասնակցության մասին համառոտ տեղեկատվություն, որը հնարավություն կնպաստի հետագա համագործակցության զարգացմանը:

9. *Առաջարկությունները*

Միջոցառման ընթացքում հնչեցին բազմաթիվ առաջարկներ և պայմանավորվածություն ձեռք բերվեց մշակելու ձևաչափ «Զարգացող Եվրոպա» միջոցառումների ընթացքում վեր հանված լավագույն փորձը մասնակից մյուս երկրների/կազմակերպությունների շրջանում կիսելու համար, որը կարելի է կյանքի կոչել կանոնավոր հանդիպումների կազմակերպմամբ և ամենամյա զեկույցի մշակմամբ:

10. *Գործուղվողը*

Արման Ուդումյան

11. *Ստորագրությունը, ամսաթիվը*

26.06.2018 թ.